

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-1>>

«11» ապրիլի 2018թ.

ք.Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կոտայք Շին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Գևորգյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի թվով 5 բակերի և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են << օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2018թ հուլիսի 31-ը:**
Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

- ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,
- բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),
- գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերութունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերութունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերութուններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերութուններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերութունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝ ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **41400000.0 (քառասունմեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 6900000.0 (վեց միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի

«Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Ը 900032313174
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթոյան _____
Կատարողություն՝
Կ.Տ

Կապալառու

«Կոտայք Շին» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Կոտայք
«Յունիբանկ» ՓԲԸ Արովյան մ/6
Հ/Ը 24128001501700
ՀՎՀՀ 03535759

Գ. Գևորգյան _____



Հավելված թիվ 1
«11» ապրիլի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-1 > գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մամիկոնյանց 62 շենքի բակի և խաղահրապարակի
հիմնանորոգման աշխատանքները

Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
2	3	4		
Շիանարարական աշխատանքներ				
Քանդման աշխատանքներ				
Եզրաքարերի քանդում բետոնահիմքով	զմ	98.000	0.6280	61.5440
Բետոնե հարթակի քանդում	մ ³	4.000	11.2930	45.1720
Բազալտե աստիճանների ապամոնտաժում	զմ	3.300	0.7550	2.4915
Տաղավարների ապամոնտաժում 1հատ	տն	0.250	30.7760	7.6940
Աղբամանների ապամոնտաժում 1հատ	տն	0.025	30.7760	0.7694
Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում (30+20մ2)	մ ³	2.000	2.7270	5.4540
Խճի շերտի քանդում	մ ³	2.500	0.3470	0.8675
Շին աղբի բարձում ա/հիքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ /այդ թվում կուտակված շին աղբի -35մ3/	տն	93.560	2.3470	219.5853
2-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով, բարձելով ա/հիքնաթափերի վրա /հետ լիցքի համար/	մ ³	40.000	0.3350	13.4000
Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	40.000	0.6570	26.2800
Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ	մ ²	195.00	0.5760	112.3200
Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	մ ²	195.00	2.7520	536.6400
Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ ³	2.920	8.7070	25.4244
Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 15x300մմ	զմ	146.00	4.0070	585.0220
Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ ³	0.920	8.7070	8.0104
80x200մմ կտրվածքի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով /այդ թվում գրուցատաղավարի/	զմ	92.000	3.6020	331.3840
Հենապատի ց/ավազե սվաղ	մ ²	49.000	1.5210	74.5290

Խճի նախապատրաստական շերտի պատրաստում բետոնե գեղարվեստական սալիկների տակ	մ ³	9.375	8.7070	81.6281
B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 7սմ հաստությամբ	մ ³	4.375	21.7840	95.3050
5սմ հաստությամբ ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	մ ³	3.125	8.0910	25.2844
Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում /այդ թվում գրուցատաղավարի/	մ ²	62.50	3.6290	226.8125
Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ ³	80.700	1.5490	125.0043
Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	96.840	3.9470	382.2275
Բուսահողի փոում ձեռքով	մ ²	538.00	0.2610	140.4180
Սիգամարգերի տեղադրում	մ ²	538.00	0.1160	62.4080
Ճեմուղիների երեսպատում 30սմ հաստությամբ բազալտե սալերով	մ ²	20.000	9.6570	193.1400
Կապույտ ավազի փոում	մ ³	2.000	4.9860	9.9720
Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	10.000	3.4040	34.0400
Արդամանների տեղադրում ամրացումով	հատ	8.000	1.7020	13.6160
B-15 դասի բետոնից բետոնե թմբի պատրաստում	մ ³	0.400	33.8210	13.5284
20x20x80սմ բազալտե ցայտաղբյուրի պատրաստում և տեղադրում	կ-տ	1.000	64.7670	64.7670
Պոլիպրոպիլենային խողովակի անցկացում Φ 25սմ, փորձարկումով	զմ	60.000	0.4630	27.7800
Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում Φ 50սմ, փորձարկումով	զմ	60.000	0.4090	24.5400
Մանկական խաղերի, մարզասարքերի տեղադրում	հատ	3.000	4.8230	14.4690
Աստիճանի իրականացում				
B-12.5 դասի բետոնով խամքարաբետոնե աստիճանների և ահրթակների պատրաստում	մ ³	0.700	26.9050	18.8335
Միաձուլվ է/բետոնե աստիճանների և ահրթակների պատրաստում -15 դասի բետոնից	մ ³	0.400	30.7850	12.3140
Ամրանի արժեքը Φ 10 A500c դասի	տն	0.013	247.9360	3.0992
Թերթապողպատի տեղադրում 80x80x6սմ, 14հատ	տն	0.004	386.2160	1.6299
Դյուբեյլ պտուտակամեխ D12	հատ	56.000	0.2020	11.3120
Աստիճանների և աստիճանատակերի, ահրթակների երեսպատում 30սմ հաստությամբ բազալտե սալերով	մ ²	5.000	11.8010	59.0050
Բազրիքների տեղադրում 50x30x2.5սմ, 25x25x2սմ	զմ	5.800	1.7140	9.9412
50x30x2.5սմ մետաղական խողովակի արժեքը	զմ	5.700	0.9300	5.3010
25x25x2սմ մետաղական խողովակի արժեքը	զմ	4.100	0.4610	1.8901

Մետաղական մասերի 2 շերտ ներկում	մ ²	5.200	0.7900	4.1080
Հենապատի բարձրացում	հատ	104.000	0.2820	29.3280
Անցքերի շաղափում	տն	0.040	270.8760	10.8621
Խարսխաձողերի տեղադրում անցքերի մեջ Φ10 A500c դասի	տն	0.040	270.8760	10.8621
Պոլիմեր-շաղափի ներարկում անցքերի մեջ	մ ³	0.004	462.2410	1.9414
Միաձույլ ե/բ հենապատերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	3.000	38.3040	114.9120
Ամրանի արժեքը Φ10 A500c դասի	տն	0.007	247.9360	1.6116
Հենապատի լավորակ ց/ավագե սվաղ ցանցով	մ ²	41.500	2.3820	98.8530
Հենապատի ներկում, մածկապատումով	մ ²	41.500	0.5630	23.3645
Տաղավարների պատրաստում և տեղադրում /3x2.5/մ 1հատ				
3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	0.350	2.9280	1.0248
Բնահողի բարձում ա/հնքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.648	2.3470	1.5197
Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	0.350	36.7280	12.8548
Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.080	247.9360	19.8349
Ջրուցատաղավարի պատրաստում /կանգնակներ 100x100x3մմ մետ խողովակներից, հեծաններ 100x100x3մմ, տանիքային մաս 80x80x2մմ, կավարամած 30x30x1.5մմ, բազրիքաճաղեր 30x30x1.5մմ/	տն	0.380	51.6210	19.6160
100x100x3մմ մետ խողովակների արժեքը	զմ	22.200	2.9910	66.4002
80x80x2մմ մետ խողովակների արժեքը	զմ	21.400	1.6600	35.5240
30x30x1.5մմ մետ խողովակների արժեքը	զմ	58.000	0.5050	29.2900
Պրոֆ /զունավոր/ թիթեղի ծածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ КП-21-0.5մմ	մ ²	12.000	3.7530	45.0360
Մետաղական նստարան փայտե նստատեղերով	հատ	2.000	3.4040	6.8080
Մետաղական սեղան /զրուցատաղավար/	հատ	1.000	2.3640	2.3640
Ջրուցատաղավարի մետաղական մասերի 2 շերտ յուղաներկում	մ ²	27.000	0.7900	21.3300
Մետաղական ճաղաշար 210զմ				
3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	6.400	2.9280	18.7392
Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	2.200	0.6570	1.4454
Ավելևոր բնահողի բարձում ա/հնքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	7.980	2.3470	18.7291
Խճի շերտի պատրաստում	մ ³	1.960	8.7070	17.0657
Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	2.240	34.6320	77.5757
Թերթապողպատի տեղադրում 80x80x6մմ	տն	0.042	386.2160	16.2989
40x40x2մմ, 30x60x2մմ մետաղական խողովակներից, 40x40x4մմ թերթապողպատից բազրիքների տեղադրում	զմ	210.000	1.7140	359.9400

40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	630.000	0.5770	363.5100
30x60x2մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	210.00	0.6420	134.8200
40x40x4մմ թերթապողպատից արժեքը	տն	0.084	321.5860	27.1429
Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	2.109	21.7350	45.8348
Ոռոգման ցանց				
Պողպատե խողովակի տեղադրում $\Phi 51 \times 3$ մմ փորձարկումով	զմ	85.000	1.4650	124.5250
Պողպատե խողովակի տեղադրում $\Phi 25 \times 3$ մմ փորձարկումով	զմ	19.000	0.8610	16.3590
Խողովակաշարի լվացում վարակագերծումով	կմ	0.104	46.8700	4.8745
Ոռոգման ծորակների տեղադրում $\Phi 25$ մմ	հատ	8.000	3.0660	24.5280
Պողպատե ձեւավոր մասերի տեղադրում	տ	0.017	955.3960	15.7640
Ոռոգման դատարկման ծորակների տեղադրում $\Phi 50$ մմ	հատ	3.000	20.6770	62.0310
Պողպատե կցաշուրթի տեղադրում $\Phi 50$ մմ	հատ	6.000	2.7110	16.2660
Փականների տեղադրում $\Phi 25$ մմ	հատ	3.000	2.8890	8.6670
Խողովակների 2 շերտ յուղաներկում	մ ²	18.900	0.7900	14.9310
Էլեկտրալուսավորություն				
3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	2.400	2.9280	7.0272
Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	1.120	0.6570	0.7358
Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	2.368	2.3470	5.5577
Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	1.280	34.6320	44.3290
133x4մմ մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ	տն	0.041	64.6300	2.6328
133x4մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	3.200	4.0560	12.9792
Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	4.000	9.9570	39.8280
102x4մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	27.200	3.0680	83.4496
32x3մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	4.000	0.7040	2.8160
Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.272	21.7350	5.9037
Լուսատու լուսադիողային 1x85վտ	հատ	4	18.1650	72.6600
ABBԳ 4x16մմ ² մալուխի անցկացում օդով ճոպանով	զմ	80.000	0.8590	68.7200

ABBF 2x2.5մմ2 մալուխի անցկացում	զմ	20.000	0.1690	3.3800
Ճոպանի արժեքը	զմ	80.000	0.1890	15.1200
Մեկուսիչ ՏՏ-20	հատ	4.000	0.4050	1.6200
Մեկուսիչ Շնկոյզ	հատ	4.000	0.6895	2.7580
Ընդամենը				6000.00
Սարքավորումներ /նստարաններ, աղբամաններ, մետ. սեղան, մարզասարքեր, մանկական խաղեր/				754.00
ԱԱՀ	20%			1200.00
Ընդամենը				7200.00

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱԿԱՇԻՎ

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճ. 3/14 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքները

N N	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը	
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանոնացված աշխատանքներ				
1	P23-247 P23-223 P23-234	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձրում ինքնաթափ մեքենաների վրա /1650մ²/	տն	2.5000	0.8510	2.1275
2	C310-13	Աղբի տեղափոխում մինչև 13կմ	տն	2.5000	1.8420	4.6050
3	E27-36	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/	զմ	102.3000	0.6340	64.8582
4	P9-26 կիր.	Մետաղական ցանկապատերի, բազրիքների ապամոնտաժում	զմ	98.9000	0.3390	33.5271
5	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով, 15.0քմ	մ³	1.0500	2.7960	2.9358
6	E48-253 կիր.	Տարածքի մաքրում կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից	հատ	45.0000	0.0430	1.9350
7	C310-1 տ.մ.կ 29	Առկա զրուցարանի ապամոնտաժում	հատ	1.0000	4.4890	4.4890
8	P23-145 E46-82	Քարե շինության ծածկի սալի քանդում	մ³	2.1700	16.8900	36.6513
9	P23-142 կիր. E46-79 կիր.	Քարե շինության պատերի քանդում	մ³	5.6000	8.7310	48.8936
10	E1-1746	Տարածքի համահարթեցում մեխանիզմով	մ²	1050.0000	0.0360	37.8000
11	E1-961	III կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	35.4460	1.5860	56.2174
12	E1-969 E1-1184	Նույնի օգտագործում տեղում տոփանելով	մ³	35.4460	0.9710	34.4181
13	C310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձրում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	23.7800	2.4190	57.5238

<u>Կառուցողական աշխատանքներ</u>						
<u>Քետոնե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերով</u>						
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ ³	5.4470	5.9800	32.5731
2	E27-78	Քետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	զմ	311.3000	4.1040	1277.5752
<u>Քետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով</u>						
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ ³	2.1090	5.9800	12.6118
2	E27-79	Քետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	զմ	281.2000	2.9890	840.5068
<u>Քետոնե սալիկների (տոմետ) տեղադրում</u>						
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ ³	20.1750	5.9710	120.4649
2	E27-19	Չարթեցնող շերտ քետոնե սալերի տակ 4սմ հաստությամբ չոր ց/ա շաղախով	մ ³	16.1400	11.3590	183.3343
3	E27-176	Սալիկապատում քետոնե սալիկներով	մ ²	403.5000	3.6170	1459.4595
<u>Չեմապատերի վերանորոգում</u>						
1	E46-51	Անցքերի բացում գոյություն ունեցող քետոնե հեմապատում, Փ12մմ	հատ	35.0000	0.2580	9.0300
2	E6-86	Փ10A500c ամրանների տեղադրում, L=200մմ	տ	0.0040	303.8190	1.2153
3	շուկա	Շաղախած անցքերի լցափակում պոլիմերցեմենտային լուծույթով	կգ	2.4500	2.2140	5.4243
4	E6-90	Չեմապատի բարձրացում B15 դասի քետոնով	մ ³	2.5000	32.2430	80.6075
5	E15-201	Սոկա և նոր կառուցվող հեմապատերի սվաղում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ	մ ²	80.4200	1.1750	94.4935
<u>Ցայտադրյալների պատրաստման, տեղադրման աշխատանքներ, /2 հատի համար/</u>						
1	E6-20	Ցայտադրյալի տեղի քետոնացում B15 դասի քետոնով	մ ³	0.0600	30.5830	1.8350
2	E17-91 շուկա	Ցայտադրյալի պատրաստում և տեղադրում մշակված գրանիտե բարից	հատ	2.0000	80.9570	161.9140
3	շուկա	Ամրան Փ14A500c	տ	0.0027	191.0610	0.5197
4	շուկա	Պող, քիթեղ 200x200x2մմ	մ ²	0.0800	5.2330	0.4186
5	շուկա	Ցինկապատ թասակ Փ200մմ, h=100մմ	հատ	2.0000	6.6460	13.2920
6	շուկա	Ցայտիչի տեղադրում Փ15մմ	հատ	2.0000	4.5690	9.1380
7	E23-1	Ավազի նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում	մ ³	17.8600	2.8980	51.7583
8	E22-448	Չավաքովի ե/բ դիտահորի կառուցում	մ ³	0.3400	41.0320	13.9509
9	E11-11	Քետոնե նախապատրաստական շերտ	մ ³	0.2400	22.9930	5.5183
10	E11-5	Թեթև խիճ	մ ³	2.6000	5.8370	15.1762
11	P9-118	Մետաղական դռնակ	տ	0.0300	386.6060	11.5982
12	շուկա	Ուետին	զմ	6.0000	0.3320	1.9920
13	շուկա	Ծխնի	հատ	4.0000	0.2490	0.9960
14	շուկա	Փական	հատ	2.0000	1.2460	2.4920
15	շուկա	Ջերմամեկուսիչ սալ (երկտավր 30x3 L=400մմ- 2հատ, 30x3 L=590մմ -4 հատ պլաստմաս, 30x 3 L=490մմ 8հատ պլաստմաս, խարիխի- 4հատ, փրփրավազատ h=100մմ -1հատ, հեղուկ L=140մմ, Փ 8-6հատ)	կմայ	2.0000	13.2910	26.5820
16	E22-117	Ջերմամեկուսիչ նյութ	զմ	3.0000	0.2900	0.8700
17	շուկա	Շին. սիլիկոն	հատ	2.0000	0.8140	1.6280

18	E15-613	Մետաղական դռնակի յուղաներկում	մ ²	6.0000	0.4240	2.5440
19	E22-117	Պոլիպրոպիլենային լայնուկավոր խողովակների մոնտաժում de63 (կոյուղու)	գմ	58.0000	0.9440	54.7520
20	E22-117	Պոլիպրոպիլենային եռակցվող խողովակների մոնտաժում de15, PN=1.0ՄՊա (խմելու ջրի)	գմ	75.0000	0.3230	24.2250
21	E22-117	Պլաստմասե պատյան խողովակ DN32	գմ	16.0000	0.3730	5.9680
22	E16-134	Մետաղե գնդային փական DN15	հատ	2.0000	2.8360	5.6720
23	E22-312	Պոլիէթիլենե (PE) de15 խողովակների լվացում, ախտահանում	կմ	0.0750	46.8430	3.5132
Այլ աշխատանքներ						
1	E15-77	Ցայտադրյուրի հարթակի երեսպատում բազալտե սալերով	մ ²	1.6000	11.4580	18.3328
2	E11-55 E11-56 K=4	Առկա դիտահորերի ծածկի սալերի ց/ավագե հարթաշերտի իրականացում	մ ²	6.2000	1.0710	6.6402
3	E15-201	Տուֆե շինության պատերի սվաղում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ	մ ²	20.2000	1.1750	23.7350
4	Գնահաշվարկ N1	Մետաղական ճաղաշարի իրականացում	գմ	157.5000	5.4670	861.0525
5	Գնահաշվարկ N3	Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	18.0000	8.4250	151.6500
6	Գնահաշվարկ N2	Նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	17.0000	15.7180	267.2060
7	Գնահաշվարկ N7	Նոր մետաղական սեղանով զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2.0000	344.8920	689.7840
8	E27-19	Խաղահրապարակներում կապույտ ավագի գլաքարի շերտի իրականացում, 10սմ հաստ:	մ ³	9.0800	1.9010	17.2611
9	Գնահաշվարկ N5	Նոր մանկական խաղասարք «4 տեղանոց պտտվող կարուսել»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2.0000	163.8450	327.6900
10	Գնահաշվարկ N4	Նոր մանկական խաղասարք «ճոճանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2.0000	74.3710	148.7420
11	Գնահաշվարկ N6	Նոր մանկական խաղասարք «Հորիզոնական ճոճանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2.0000	39.7820	79.5640
12	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=7սմ	մ ²	15.0000	0.6020	9.0300
13	E27-169	Մանրահատիկ ավախտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստությամբ	մ ²	15.0000	2.1290	31.9350
14	E1-1592	Բուսահողի մշակում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների բարձելով	մ ³	67.8800	0.3470	23.5544
15	C310 տ.մ.կ. 29	Բուսահողի տեղափոխում 50կմ	տ	101.8200	4.8920	498.1034
16	E48-168 E48-169	Բուսահողի փռում ձեռքով կանաչ տարածքներում, 100մն հաստությամբ	մ ²	678.8000	1.2800	868.8640
17	E48-166	Նախապատրաստում սերմի ցանելու համար	մ ²	678.8000	0.1300	88.2440
18	E48-214	Սերմի ցանում 1մ ² - 35գր	մ ²	678.8000	0.1800	122.1840
Էլեկտրատեխնիկական մաս						
1	E1-962	Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով	մ ³	31.3400	2.7970	87.6580
2	8-142-1	Անկողնակի պատրաստում	գմ	92.2000	0.1790	16.5038
3	շուկա	Ավագ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 10սմ հաստ., 3.3+3.3մ ³ /	մ ³	6.6000	1.4680	9.6888
4	8-417-7	Խողովակ վինիլպլաստե Ø50մմ	գմ	92.2000	0.4010	36.9722
5	E8-146-1	ABBԴ 4x16մմ ² հատվածքով մալուխի անցկացում /վերգետնյա/	գմ	7.5000	1.0310	7.7325
6	E8-145-1	ՄԵՍ 2x4մմ ² հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	92.2000	0.4080	37.6176
7	շուկա	Պաշտպանիչ /զգուշացնող/ ժապավենի տեղադրում 300մն լայնքով	գմ	92.2000	0.1483	13.6733
8	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով, տուփանումով	մ ³	23.9700	0.8100	19.4157
9	C310-13 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 13կմ	տ	12.5300	2.4190	30.3101

10.	Գճահաշվարկ N8	Լուսավորության ղեկորատիվ հեմասյունների տեղադրում	հատ	7.0000	83.2180	582.5260
11	8-594-1	Բացակայող ապակե պլաֆոնների տեղադրում /NCL-4U-840-E27/ Էլեմենտ լամպով 85վտ. կամ համարժեք	հատ	3.0000	9.7600	29.2800
		Ոռոգում				
		Տեխնոլոգիական աշխատանքներ				
1	E22-397	Սիացում գործող ջրագծին	տեղ	1.0000	2.1810	2.1810
2	E22-64	Խողովակաչարի անցկացում պողպատե էլեկտրատեղակայման խողովակներից Ø57x3.0մմ, հիդրավիլիկ փորձարկումով	գմ	103.0000	1.4100	145.2300
3	E22-64	Խողովակաչարի անցկացում պողպատե էլեկտրատեղակայման խողովակներից Ø40x2.5մմ, հիդրավիլիկ փորձարկումով	գմ	78.0000	0.9770	76.2060
4	E22-368	Թուփե կցաշղթավոր սողնակների տեղադրում 30x 66p Ø50մմ Py1.0ՄՊա	հատ	1.0000	10.8600	10.8600
5	E22-429	Պողպատե կցաշղթաների եռակցում Ø50	հատ	2.0000	2.1250	4.2500
6	Գճահաշվարկ N14	Ջրթող հանգույցների մոնտաժում	կ-տ	10.0000	5.8375	58.3750
7	Գճահաշվարկ N15	Խողովակաչարի դատարկման հանգույցի մոնտաժում	կ-տ	1.0000	4.2600	4.2600
8	E22-362	Պողպատե ձեւավոր մասերի մոնտաժում	տ	0.0060	1679.4610	10.0768
9	շուկա	Ջեյլուս M16, L=60մմ	կգ	1.1760	0.8720	1.0255
10	շուկա	Պնդոլակ M16	կգ	0.3360	0.8720	0.2930
11	E15-614	Պողպատե խողովակների ներկում 2 շերտ	մ ²	28.3000	0.8000	22.6400
12	E22-335	Պողպատե խողովակների լվացում	գմ	181.0000	0.0210	3.8010
		Շինարարական աշխատանքներ				
1	E1-961	Բնահողի մշակում ձեռքով	մ ³	5.1000	1.5860	8.0886
2	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	5.1000	0.8100	4.1310
3	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով, 8.2քմ	մ ³	0.5740	2.7960	1.6049
4	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=7սմ	մ ²	8.2000	0.6020	4.9364
5	E27-169	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստությամբ	մ ²	8.2000	2.1290	17.4578
		Ընդամենը				10400.00
		ԱԱՀ, 20%				2080.00
		Ընդամենը				12480.00

Ծավալաթերթ - նախահաշիվ

«ԱՐԱՐԿԻՐ ՎԱՐՉԱՎԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՑ Փ. 29 ՇԵՆՔԻ ԲԱՎԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, ԽԱՂԱՅՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԴԻՄԱՆՈՐՈԳՍԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

N	Գնահատում	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը հազ. դրամ	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
1	P23-247	Տարածքի մաքրում, արփի հավաքում,	տն	0.9500	0.8420	0.7999

	P23-223 P23-234	տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա /600մ²/	տն	0.9500	1.8240	1.7328
2	C310-13	Աղբի տեղափոխում մինչև 13կմ	զմ	148.8000	0.6280	93.4464
